2004

1641 Ա
590-Հ

ԵՐԵՔ

ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆՔ

մին Քահանայի մին Աշխարհական
մարդոյ հետն։

ՓՐԿՈՒԹԻՒՆՆ ՀԱՆԱՊԱՐՀԻ ՀԱՄԱՐ։

Թարգմանութիւն։

Ելնելով դպրոց-ՆԷՆ։

Ի ՄՈՍԿՈՎ,
Ի Տպարանի Հեմպելեանի Տեառն Լաղարեանց.
1840.

28

ПЕЧАТАТЬ ПОЗВОЛЯЕТСЯ

съ тѣмъ, чтобы по отпечатаніи представлено было въ Цензурный Комитетъ узаконенное число экземпляровъ. Москва 29 Сентября 1839 года.

Цензоръ В. Флеровъ.

3484
40

„Ի՞նչ օգուտ է մարդոյն՝ որ ամէն
„աշխարհքիս ստանայ և իրան անձին
„վնաս տայ. կամ թէ ի՞նչ գին կտայ
„մարդ իրան անձին փրկելոյ համար:
„Մատ: Ժզ. 26:

„Օրէնքի գործքերովն իսկի մին
„մարմին չիարդարանալ նորա առաջին.
„պատճառն որ օրէնքովն է մեղաց գի-
„տութիւնն: Բայց հիմիկ հենց առանց
„օրէնքի Աստուծոյ արդարութին յայտնը-
„ված է որ նորա համար օրէնքն և մար-
„գարէքն վկայել են: Պատճառն որ
„այ արդարութիւնն յի՛ քի՛ հաւատքի-
„ցըն (է) ամէն հաւատացեալներին վե-
„րայ. և իսկի ջոկութիւն չկայ:

„Ինչու որ ամենքն մեղանչեցին և
„աստուծոյ փառքէն պակասեցան։ Եւ
„ձրի են արդարանում նորա շնորհ-
„քովն էն փրկուէ ձեռովն որ քրիստոս
„Յիսուսումն (է)։ Հռովմ. գ. 20—24։

„Ինձ մօտ եկէք ամէն վաստակած-
„ներ և բեռնաւորներ. և ես հան-
„գիստ կըտամ ձեզ։ Մատ. ժ՚ա. 28։

„Ես եմ ճանապարհ ճշմարտու-
„թիւն և կեանք։ Իսկի մինն չէգալ
„Հօր մօտ՝ բայց միայն ինձանով։ Յովհ։
„ժդ. 6։

ԱՌԱՋԻՆ
ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆ։

Քահանայն ասէ։

Ողջոյն լինի քեզ բարեկամ։ Ահա տեսնում քեզ որ առաւօտանց շուտով վերեւ կացել և աշխատանքի մէջ մտել, տաւարներդ և ոչխարներդ կերակրված են, և ծառաներդ գործի մէջ մտած։ Տեսնումեմ որ քո սրտի դլխաւոր ցանկութիւնն և փափաքն էն է՝ որ էս աշխարհքի մէջ հարստանաս և փարթամանաս։

Ամենաբարեկամն տարդն ասէ։

Ճշմարիտ է տէ՛ր. էս ամենս հարկաւոր է. ինչուոր՝ պէտք է հոգս անել կերակրի և շորերի համար, և էլ պէտք է Պարոնի հարկըն վճարել, և ահա էս ամենիս համար պէտք է հոգս անել և աշխատիլ։

Քահանայն ասէ։

Ես իսկի չեմ կամենում քո աշխատանքըդ խափանել, ինչուոր՝ հենց պարտական ես որ իսկի չինուլանաս քո հարկաւոր գործիցդ։ Բայց դու գիտումես որ մին ուրիշ պարտականութիւն էլ

ունիս էդ մշակութենից ջոկ, այսինքն՝ պարտական ես որ հոգիդ էլ կերակրես և հագցնես։

Աշխարհաբար տարբն ասէ։

Ճշմարիտ է որ ամէն բանից էլ աւելի պէտք է հոգւոյ համար հոգս անել, պատճառն որ՝ էն է գլխաւոր պարտաւորութիւնն։ Բայց ես յոյս ունիմ որ իսկի անհոգ չեմ իմ հոգւոյ համար, և էն նոր գալու աշխարհքին համար, և սրա համար շատ կըտրտմէի եթէ դու ինձ էնպիսի վատ մարդ համարէիր։ կարծումեմ որ իսկի պատճառ չունիս՝ որ ինձ էնպիսի անհոգ մարդ համարիս։

Քահանայն ասէ։

Ես թէ մին յատուկ պատճառ ունիմ որ քեզանից աւելի կասկածիմ քան ուրիշներից։ Բայց երբոր չորսկողմով ամէնին վերայ նայումեմ, և փրկութեան համար լինօղ անհոգութիւնը տեսնումեմ՝ որ նորանում ամէն մարդիք մնումեն, ապացաւումեմ իմ մահկանացու ընկերներիս համար՝ և մանաւանդ եթէ քեզ մտիկ տամ որ էս ժողովուրդներիս մինն ես, իմ անձը պարտաւոր եմ համարում որ իմացումն տամ քեզ էնքեզ վերայ գալու դատաստանին համար՝ որ չմեռնիս առանց թողութիւն գտնելոյ յոի քոի հաւատքովն, և էլ որ կարօղ լինիս սրբոց վիճակին մասնակից լինիլ։ Կոչ. Ա. 12։

Աշխ։ Տ՞էր ողորմա՛, լինչ կարելի է՝ որ դու էդպիսի բաներ մտածես մեզանից, որ իսպառ հակառակ են մարդասիրութեան։

Քահ։ Լաւ է՝ դու ծուռ մտքով մի գործածեր էդ բառը. Տրդատ։ Ինչուոր՝ դա էլ հենց էն նշանակութիւնն ունի՝ որ ունի բառս։ Ուրեմն ոչերն չէ հրամայում որ ամէն մարդ բարի համարենք առանց խորութեան, բայց որ ամէնին համար բարիք խընդրենք և ամենին հետ բարի մտքով վարվինք։ Ուրեմն եթէ.իմ անձըս իսկի չտայի աշխատանքի և տրտմութեան քեզ համար, այսինքն՝ եթէ իսպառ դատարկ լինէի Տրդատ։ Ես։ ապա ինձ կըհամարէիր թէ Տրդատ։ մարդ եմ։

Աշխ։ Բայց ես յոյս ունիմ՝ որ մեզ ամենիս չդատապարտես։ Ուղղորդ որ՝ մեզանից մին քանիսն ամբարիշտ՝ երդում ուտող և հարբեցող մարդիք են, բայց չէ թէ մենք ամէնքս էնպէս ենք։ Դու ինքդ գիտումես որ միշտ ժամ եմ գնում, և տարին մին քանի անգամ էլ հաղորդութիւն եմ առնում։ Ես իսկի մին ժամանակ էլ իմ կենացս մէջ ինաս չեմ տուել մընին, և ամէն մարդոյ էլ վՀարումեմ ինչ որ պարտական եմ նորան։

Քահ։ Ուրեմն դորա վերայ ես հաստատում քո յոյսըդ որ երկնքի արքայութիւնն ժառանգես։ Թէ որ էդ լինի քո հաստատութեան հիմն, ապա պէտք է յայտնի ասել քեզ՝ թէ էդ կարծիքըդ քեզ անոյոս կըթողէ փորձելոյ և քննութեան մեծ օրումն։ Ուրեմն քննենք նորան այ խօսքոնը։ Դու իսկի մին ժամանակ ինաս չտվիր մընին։ Իբր թէ կամենումես ցոյց տալ՝ ինչպէս ինձ երևումէ՝ թէ իսկի մին ժամանակ յափշտակութիւն կամ

սպանութիւն չիարիր. ես էլ չեմ համարում թէ յափշտակեցիր և սպանեցիր. բայց հենց էդպէս էլ՝ շատ մեղքեր ես գործել և շատ վնասներ արել՝ չէ՞ թէ ուրիշներին մէնակ, բայց հենց յաստուկ քո անձինդ՝ մեծ և անթիւ յանցանքներով այ սուրբ օրէնքին դէմ՝ օրէցօր մեղանչելով։ Մանաւանդ որ յայտնի ասեմ՝ դու նորա ամէն մին պատուիրանքներըն քանդել ես։

Հարց։ Ո՞վ հասցրուց քեզ էդպիսի զրուցներ ինձանից։

Պատ։ Աստուած ինքն իրան խօսքումն։ Ինչու որ՝ նա ասումէ թէ դու՝ և ամէն մարդկանց ալգն մեղք են գործել։ Պատճառն որ՝ ամէնքն մեղանչեցին և այ փառքիցն պակասեցան։ Հռոմ. գ. 23։ Նոտուր համար նա դատապարտումէ քեզ։ Ինչու որ դունորա ամէն պատուիրանքներըն քանդել ես։

Հարց։ Ես իսկի մին ժամանակ կռապաշտութիւն կամ սպանութիւն և կամ շնութիւն չեմ արել։

Պատ։ Հա՝ հենց էդ ամէնն էլ արել ես։ Մի թէ իսկի մին ժամանակ մին երկրաւոր բան աւելի չիսիրեցիր այ ամենի և նորա շնորհքից. մի թէ մին ուրիշ բանից աւելի չի վախեցար քան ամենը բարկացնելուցն, մինչև որ աւելի կամենալ քո մին յայտնի պարտաւորութիւնդ թողել՝ քան թէ քեզ միայր մին ժամանակաւոր նեղութիւն բերել։ Հա՝ սորանով առաջին պատուիրանքըն քանդել ես։ Երկրորդ պատուիրանքն ցոյց է տալիս թէ

այ պաշտօնէն քանի սրտի ջերմեռանդութենով և սրբութենով պիտի կատարես, և նրա համար ամէն ինչ որ քո աղօթքի մէջն անպատշաճ էլաւ՝ ինչպէս որ ցրվածութիւն, ծուլութիւն, և անամօթութիւն, էնպէս յանցանք են, ինչպէս էլ որ կռոց պատկերների բանացնելն՝ և էս պատուիրանքս քանդումն, և էսպէս էլ այ պաշտօնիցն ծուլանալն է։ Եւ էս բանիս համար ինչպէս որ ինձ երևումէ՝ քո անձէդ անմեղ համարելոյ իսկի պատճառ չունիս։ Ուրեմն քո եկեղեցի գալէդ և հաղորդութիւն առնելդ էսպիսի ծուլութենով և անհոգութենով՝ աւելի արժան է որ քո մեղաց հետն դասէիր՝ քան թէ նորանով համարձակվէիր քո անձէդ այ առաջին արդարացնել։ Բայց հենց հիմիկ էլ որ ինձ հետ խօսումես՝ մին քանի բոպէից առաջ ես լսեցի որ դու Տէրին անունէն ոչընչի վերայ առիր, պատճառն որ՝ առաջ բերիր նորան զուր տեղն, և առանց զարհուրելի ճանաչելոյ նորա մեծ փառաւորութիւնէն՝ որ նորանից խօսեցիր դու։ Եւ լինի թէ տասն հազար անգամ էսպէս արած լինիս քո կեանքիդ մէջն։ Եւ ահա սորանով երբորդ պատուիրանքն քանդելես։ Ամէն ժամանակ որ առանց մին հարկաւոր գործի ծուլացել ես այ պաշտօնն գալ կիրակի օրումն, և թող ես տվել աշխարհական մտածմունքներին որ անընդունելի անեն քեզ Աստ պաշտելոյն, և աշխարհական գործ ես արել էն օրումն՝ որ կարելի էր ուրիշ օրումն անել, և հոգս չես արել որ էն բոլոր օրէն այ համար սուրբ պահես կարդալով՝ լսե-

լով՝ աղօթք անելով՝ մտածելով և օգտակար խօսակցութենով. ապա Ճշմարիտ է որ Տէրին սրբբված օրըն պղծել ես։ Ուրեմն էս պատուիրանքների ամեն միտքն էս է, թէ Սերիր քո Տէր Աստուդ քո ամէն սրտովդ. բայց դու սրանից պակասված դտար՝ ամէն ժամանակ որ քո գործդ այ փառքի համար չլիկատարեցիր։ Ուրեմն ինչ էս մտածում քո անմեղութեան համար, քո էն պարտաւորութիւններիդ մտիկ տալով՝ որ պատուիրանքների առաջին տախտակումն են յայտնըված։

ԱՀԼԻ։ Ես չեմ կարող համարձակվիլ որ իմ անձըս արդարացնեմ՝ դէպի Աստուծ լինող պարտաւորութիւններին մտիկ տալով, բայց հաստատ գիտումեմ թէ մին վնաս չեմ արել մարդոյ։

ՔՍՀ։ Դու էդպէս չէիր ասիլ թէ որ այ օրէնքի հոգևոր բնութիւնը և գերազանցութիւնը իմանայիր, ինչպէս որ մեր Տէրն նորանց մեկնեց իրան քարոզութեան մէջն որ հրէայներին ասաց սարին վերայ. (Մաթ. Է, գ, է գլ. ԺԸ) էն տեղն տես. նումես որ վատ նայելն աչքով կամ սրտով՝ շընութիւն է համարվում այ առաջին, և զուր տեղ քարկանալն և մընին նախատինք ասելն՝ ինչպէս մարդասպանութիւն են համարվում. ապա ո՞վ է կարող իրան անձըն ազատ համարիլ սրանցից և արդարացնել իրան։ Եթէ էս մեկնութեանս կերպով էն մեկել պատուիրաքներըն էլ իմանաս, ապա յայտնի կըլինի թէ քո ամէն կենցաղավարութիւնն որ անպատշաճ է քո կարգիդ և աստիճանիդ, և ամէն անամօթութիւն, և քո մեծա-

ւորայ երեսին յանդգնութենով նախատինք տալն, և քեզանից պուճուրներին հետ անողորմութենով և անիրաւութենով կենցաղավարվելն հինգերորդ պատուիրանքըն քանդումն։ Եւ ամէն չար խօսակցութիւն և զրպարտութիւն և սուտ և փուճ պրուցներ որ ուրիշներին վնաս են տալիս՝ հակառակ են իններորդ պատուիրանքին, և ամէն տրըտընջմունք և անպոհացող միտք. նախանձ և ագահութիւն՝ մեղք են՝ որ տասներորդ պատուիրանքին հակառակեն։

ԼՀՇ։ Ուրեմն երևումէ թէ մէնակ մին պատուիրանք է մնում՝ որ նորան հակառակ չեմ մեղանչել։

ՔՈՀ։ Եթէ ճշմարտութենով քո անձըդ և այ օրէնքըն ճանաչէիր, ապա քո անձըդ հենց էն մընիցն էլ ազատ չէիր համարիլ։ Մի բարկանար՝ ինչուոր քո հոգւոյ սիրովն շարժվաց խօսումեմ։ Ես չեմ համարում թէ դու գող կամ յափշտակող ես, բայց միթէ իսկի մին ժամանակ չլծածկեցիր կամ՝ չիթադուցիր քո ապրանքիդ պակասութիւնըն որ ծախեցիր՝ երբոր գիտումէիր թէ հենց էն պակասութիւնների ծածկվելն էլաւ յատուկ պատճառ որ յօժարացրուց մարդոյն որ գնէ։ Մանաւանդ՝ միթէ շատ անգամ չի գովեցիր քո ապրանքըդ էնպիսի հասարակ խօսքերով՝ որ իսպառ ճշմարիտ չէին։ Մի թէ չի առիր անողորմաբար էն հարկաւորութեան պատճառըն որ չքաւոր ծախսողին քառնադատումէր ծախել, և նորա ապրանքի գինըն իրան

յատուկ արժողութենիցն շատ աւելի քչացրիր։ Ապա հենց յատուկ սրանք քեզ հակառակ վրկայութիւն կըտան։

Ա՛յո։ Տէր եթէ էդպիսի կերպով դատիս՝ ամէն աշխարհքըն դատապարտումես. ինչուոր՝ քո խոսքեդ կեօրէ իսկի բարի մարդ չկայ երկրիս վերայ։

Քահ։ Այս խոսքս չէ թէ ինձանից եմ հնարում, բայց յատուկ Աստուածընչի խոսքն է՝ որ վկայումէ՝ թէ ոչ ով չկայ որ բարի անէ, և ոչ ով չկայ մինչև մինն էլ։ (հռոմ. ԺԳ. 12։)

Ա՛յո։ Ուրեմն ուրախ եմ ես որ ինձ իմ ընկերներիցս աւելի վատ չես համարում, և յոյս էլ ունիմ՝ թէ ուրիշներից աւելի պակասութիւն չունիմ, ինչուոր ամէնքն մեղաւոր են։

Քահ։ Եւ դրա համար կարծումես որ քեզ պէտք չէ յուսահատ լինել թէ դու էլ էնպէս ես, բայց յոյս ունիս որ շատերին հետ դուն էլ պրծնիս։ Զէ՞ որ էսպիսի լորհուրդ քո սրտի խորութեան մէջ թագկացած է։ Բայց ասա՛ ինձ, էն շատերն ի՞նչ կարեն անել ոյն, որ նորա ամէն բան տեսնող (ամենատես) աչքիցն ոչ ով կարող չէ թագ կենալ՝ և նորա ձեռին ոչ ով կարող չէ դէմ կենալ՝ կամ նորանից պրծնիլ։ Եթէ էլած էիր սողոմի մէջն կամ ջըրհեղեղի ժամանակումն հենց էս խորհուրդս իրան քաղցրութենովն քեզ էլ կըքնայնէր էն զօրացած մեղքերին մէջ՝ որ էն ժամանակի մարդկանցըն պըղ-

ծումէին, բայց չէր ապրեցնել քեզ էն կրակից և ջրհեղեղից որ ամէն մարդկանց կորցնումէր։

Աշխ։ Ես կերպով դատելով՝ ամէն աշխարհքն դատապարտումես դու։

Քահ։ Դատապարտո՞ւ, ինչ է էդ բառդ պաաաաաաաաէ։ Էդ ցոյց է տալիս յաւիտենական տանջանքին արժանաւոր դատել և վճիռ կտրել՝ որ էդ մենակ արդար դատաւորին կըվայելի անել։ Բայց ես կամենումի իմ ամէն կարողութենով՝ որ ամէն մարդկանց ազատեմ էն յաւիցն և կորուստից որ գալու է. և սրահամար հիմիկ քեզ հետ պարզ և ճշմարտութենով եմ խօսում Աստուծոյ բանին պէս։

Աշխ։ Ուրեմն ինչ կարող է ապրիլ. և ոչ թէ հենց դու ինքդ էլ։ Աղաչումեմ տէր՝ ասա՛ ինձ, միթէ դու իսկի՞ մին ժամանակ մեղք չի գործեցիր։

Քահ։ Ամբեկամ ծաղը մի՞ աներ. ինչուոր՝ էդ բանդ որ հիմիկ դորա վերայ խօսումենք՝ խիստ շատ հարկաւոր է։ Ես էլ եմ մեղք գործել քեզ պէս, ես մեծ մեղք եմ գործել՝ և իմ մեղքերըս արժանի են էլած յաւիտենական դատապարտութեան. բայց Աստ իրան ողորմութենովն կամեցաւ ինձ վերկացնել որ ապաշխարեմ. և ինձ ցոյց տվաւ իմ վտանգըս և կորուստը, և ինձ զարթնացրուց և շարժեց որ փախչիմ էն բարկութենից որ գալու է։ Նա էլ ինձ ցոյց տըվաւ էն բացված Ճանապարհը իրան օրհնված աւետարանի միջումն՝ որ էն յաւիտենական մա-

հիսն պրծնիմ, որ մեղայ պտուղն է։ (հաւատ. ղ. 23։) Եւ յոյս ունիմ որ ստացայ էն փրկութիւնըն որ աւետարանումն առաջի դրած է՝ և մեղքի թողութիւնը ընդունեցի Յեսի Քրիստոսի։

Ալի։ Յոյս ունիմ թէ ես ինքս էլ ապաշխարել եմ. պատճառն որ՝ ամէն ժամանակ որ եթէ բարկացնումեմ ոյն՝ յետոյ ցաւումեմ նրահամար։ Եւ հավատքի համար ի՞նչ կայ, մենք ամէնքս քրիստոնեայ ենք՝ ինչպէս որ ես յոյս ունիմ. մի թէ չե՞նք։

Քահ։ Եթէ քո դղջանալդ ուղղորդ լինի, և քո հաւատքդ կենդանի և ճշմարիտ, ապա անվնաս ես, և երանելի է քո վիճակդ և կեանքդ։ Բայց շատ մարդիք իրանց անձներըն խաբում են մեռած հաւատքով և թերատ ապաշխարութենով։ Ուրեմն կամենումես որ հիմի քո հաւատքդ և ապաշխարութիւնդ էլ փորձվին։

Ալի։ Հա՝ կամենումեմ. ինչուոր փորձելն իսկի մին բան կարող չէ անել ինձ։ Եթէ ես անվախ և անվտանգ եմ, լաւ է, ապա թէ չէ՝ յոյս ունիմ որ հիմիկ էլ շատ ուշ չէ որ ես ապաշխարեմ և իմ ապաշխարութիւնըն լցնեմ։

Քահ։ Շատ լաւ ես ասում։ Ուրեմն առաջ քո ապաշխարութիւնըդ քննենք։ Ճշմարիտ ապաշխարութիւնն էն է՝ որ մեղքըն և նորա գարշութիւնըն և պղծութիւնըն քո սրտումդ իմանաս, և մտքումդ պահելով ատես։ Յետոյ՝ որ քո անձըդ մեղքով ապականված տեսնելով՝ քեզանից

գըղվիս և գարշիս և մեղքըդ թողելոյ համար ճըշ-
մարտապէս ջանք անես, և սկսես նոր կեանք վա-
րելով դէպի Աստուած դառնալ։ Ուրեմն քո ապաշ-
խարութիւնդ էդպէս է՝ թէ չէ։

Աշխ։ Յոյս ունիմ թէ էդպէս է։

Քահ։ Մեղաց պտուղն մահ է, և յաւիտենա-
կան մահ։ Ուրեմն դրէ՛ր քո մտաց մէջ՝ թէ ար-
ժանի ես էս մահիս։

Աշխ։ Ինքան, որքան էլ ուրիշներն, պատճա-
ռըն որ ամէնքն էլ մեղաւոր են. բայց Աստուած
ողորմած է։

Քահ։ Դու հիմիկ ուրիշներին համար մի խո-
սիր։ Բայց ինձ ասա՝, թէ դու հենց քեզ ինքըդ
արժանի համարուես յաւիտենական մահին։

Աշխ։ Եթէ Աստուած անսուտ արդարութեան կեսո
րէ վարվի ինձ հետ, արժանի կըհամարի ինձ.
բայց որովհետև ես հաւատումեմ թէ Աստ-
ուած ողորմած է, սրահամար յոյս ունիմ որ չի
դատապարտվիմ։

Քահ։ Ա՛խ ասումեմ, թէ քո էդ կարծիքդ որ
Աստուծոյ ողորմութեան համար ունիս, ճշմա-
րիտ ապաշխարութեան խափանող լինի։ Երևում
է թէ ողորմութեան յոյս ունիս՝ որ դեռ կա-
տարելապէս չես իմացել թէ քանի ողորմելի և
խպառ աղքատ ես, և առանց Աստուծոյ ողորմու-
թեանն յատուկ պիտի կորչիս. և վիրաւորվե-
լուցն առաջ՝ յոյս ունիս որ բժշկութեան դեղ

ընդունիս։ Այդ հենց էն է՝ որ նորան ամենակալ Տէրն անուանումէ, «վեր՝ի վերոյ (Ռաբաքալ) իրան ժողովուրդի վէրքը բժշկել։» Հիմիկ երևումէ թէ էս մեծ բանիս համար ինքդ քեզ խաբումես։ Պատճառն որ իսկի մին ժամանակ քեզ չի տեսիր թէ մեղքի և մահի վիճակի մէջն ես. իսկի մին ժամանակ ատելի չի երևեցաւ քեզ մեղքն, և իսկի մին ժամանակ շատ չի վախեցար քո անձնի կորուստիցն, և կամ խոստովան էլար թէ իսկի օգնութիւն կամ կարողութիւն չկայ քո անձնումդ։ Այ նրա համար իսկի չի փախար նորա մօտ՝ որ դատապարտութենիցն ազատողն է։ Ապա թէ որ իսկի մին ժամանակ էս կերպով չես փախած Քրիստի մօտ, ինչպէս մին անօգնական և ապականված մարդ, յայտնի է որ դեռ մին փրկութիւն չունիս նորահետ։ Տես՝ թէ ի՞նչպէս էլաւ էն առաջին հաւատացեալներին համար՝ որ առաքեալներիցն յիշվումեն գործք առաքելոց գրքումն. թէ ի՞նչպէս սուրբ Պետրոսին ականջ դնողներն զըղջացան իրանց սրտերումն, և ասացին՝ «մարդիք եղբարք ի՞նչ պիտի գործենք.» Գործ. Բ. 37։ Այ բանդապետն երբոր իրան ողորմելի վիճակն ճանաչեց՝ եկաւ դողալով ընկաւ առաքելոց ոտներն, իրան մկրտվելուցն և մեղքի թողութիւն ընդունելուցն առաջ։ Գործ։ Ի. 29։ Այ սուրբն Պօղոս գետնի վերայ զարկվեցաւ։ Գործ. Թ. Ա։

Հաշ։ Նորանք ամէնքն էլ անհաւատ էին. բայց ես իմ երեխայութենումս մկրտվեցայ, և

բարին ճանաչելոյ համար կրթվեցայ, և միշտ էլ հաւատումէի։

Քահ։ Աստուած ոչ թէ ամենին հետ մին կերպով է վարվում։ Բայց արթուն կաց աղաչում քեզ, որ քո յոյսըդ խսպառ դրսի բաներին վերայ չիդնես։ Ուղղորդ որ քո երեխայութեանումն մկրտվեցար, բայց քննիր քո սիրտըդ և կեանքըդ. մի թէ շատ ժամանակ չի կենցաղավարվեցար աշխարհքի միջումն ինչպէս առանց այ։ Մի թէ աշխարհքըն՝ մարմինըն և սատանային ուրանալոյ տեղակ՝ աշխարհքի կամացն չի հետևեցիր շատ բաներին համար մարդկանց կարծիքներին կեօրէ դատելով՝ և այ խօսքին հակառակ խօսելով։ Մի թէ շատ անգամ աշխարհքի ձայնին աւելի չի լսեցիր քան թէ այ ձայնին՝ և աշխարհքի սովորութեան պէս չի վարեցիր այ պատուիրանքին դէմ գնալով և գործելով։ Մի թէ շատ անգամ չի հետևեցիր քո մարմնաւոր ցանկութիւններին և բերմունքներին՝ մինչև որ այ մաքուր օրէնքըն ոչընչի տեղ դնել. և թէպէտ յայտնի յանցանք չես գործել՝ բայց մի թէ չար խորհուրդներ քո սրտի մէջ չի պահեցիր. և փոքրը մեղքերին համար խսպառ անհոգ չէլաք։ Եւ չէ՞ որ շատ ժամանակ հենց յատուկ սատանայն էլաւ քեզ վերայ իշխան՝ որ դրդումէր քեզ որ այն բարկացնես և նորա սուրբ անունըն և սուրբ օրըն պղծես, և էն էլ էսպիսի փուչ հեշտութեանց համար՝ որ յայտնի ցոյց են տալիս թէ նորա (այ սատանայի) իշխանութիւնն քեզ վերայ

տիրապետումդ։ Եւ չէ՞ որ դեռ հենց էդ մեղքերդ միջումն ես մնացել քիչ՝ կամ իսպառ ոչինչ հոգս անելով քո հոգւոյ փրկութեան համար. բայց յոյս ունելով թէ կարելի է որ փրկվիս։ Եւ էլ՝ մի թէ քո կենցաղավարութիւնդ դեռ հիմիկ էլ էնպէս չէ՞։ Ես տեսնումեմ՝ որ ճանաչելով խոստովանումես թէ էդ էդպէս է։ Ուրեմն յայտնի է որ քո մերտութեան շնորհքն մեղանչելովդ կորցրել ես, և էնտուր համար շատ հարկաւոր է քեզ՝ որ դէպի Ա՛ծ դառնաս և ամենն նոր՝ի նորոյ սկսես։

Աշխ։ Ի՞նչպէս կարելի է ինձ նոր սկսել։

Քահ։ Ճանաչելով և խոստովան լինելով, թէ ՈՒծանից հեռանալովդ քեզ՝ մեղքի և թշուառութեան վիճակի մէջ՝ քոյեյիր. պատճառն որ՝ նորանով հեռացար ՈՒծանից և դէպի չարն հակվեցար. և նրահամար թշնամի էլ էլար ՈՒյ հետ քո սրտումդ. և թէ՝ սրահամար իսպառ թաղված ես մեղքի մէջ և արժանի ես նորա բարկութեանն, և հենց կործանվելոյ ծայրումն ես կանգնված. որ քո յանցանքներովն քո աչոյ առաջին ծածկված է որ չես տեսնում նորան։

Աշխ։ Հապա՝ շատ եմ ուզում որ մեղքն իսպառ թողանեմ, դէպի Ա՛ծ դառնամ, և բարի կեանք վարեմ։ Ոչ լաւ կըլինի։

Քահ։ Դորանք բարի խորհուրդներ են, բայց երևումն թէ յատուկ աղբիւրից չեն դուրս գալիս. պատճառն որ՝ տեսնումեմ թէ կամենումես

մեղքըդ թող անել, և արդարութիւն գործել. բայց մին ծածուկ կերպով քո անձին ուղղութեան և բարի գործքերին վերայ ես քո յոյսըն դնում. իբր թէ նորանք կարող են ընդունելի անել քեզ, և Քրիստոսին հետ մասնակից անել քեզ։ Բայց էդ սովորութիւնդ նորանց է, որ ճշմարտութենիցն հեռացած՝ և մտքով խաւարված են, և էնտուր համար իրանց կարողութեան վերայ վստահացած՝ խնդրումեն որ իրանց արդարութիւնըն հաստատեն, որ ոչ թէ քրիստոսիցն, բայց նորանց բարի գործքերիցն է։ Բայց երբ որ դու խոստովան ես լինում թէ մեղքով լիքն, գարշելի և անպիտանես, և յօբայ նման քո անձնիցդ զըզվումես. երբոր ճանաչումես և խոստովանում ես թէ հենց շատ քիչ ողորմութեանն էլ արժան չես, և կարող չես քո անձնովդ մին բարի բան անել. երբոր ոչընչի տեղ ես դնում հենց քո էն շատ բարի գործքերն էլ, որ մեղքով ապականված են, և քո անձըդ քցումես այ առաջին ինչպէս մին կորուսված և անօգնական մարդ, որ իսկի յոյս չունի իրան անձնումն, և այս մէնակ Յեսի Քրիստոսի ձեռովն կատարված փրկութեան աւետիքովն իրան սիրտըն մխիթարումէ. երբոր էս ասված բաներս ոչ թէ մէնակ քո լեղուի դաւանութիւն են, բայց ճշմարտութենով քո սըրտի խորութենումն տպված և հաստատված են։ Երբոր էս ամէնըս կըտեսնեմ, ապա էն ժամանակն կըհաւատամ որ մին յատուկ շնորքի գործ է սկսել քո հոգւոյ մէջն։

Աշխ։ Այդ ի՞նչ է, քո էդ խրատը դէպի յուսահատութիւնն է տանում ինձ։

Քահ։ Ճշմարիտ է. ես կամենում եմ որ յուսահատ լինիս էն ամէն օգնականութենից որ քեզանից է, և որ նորանց համար քո յոյսը դընում ես ամէն գործերին վերայ որ գործել ես, կամ կըկարենաս գործել. ինչուոր մինչև էն ժամանակն էնպէս չես պատվել Քրիստին ինչպէս որ արժան է, և չես փախչել նորա մօտ ինչպէս քո մին մէնակ փրկչի մօտ։ Որ եկաւ գերիներին թողութիւն քարոզել, և սրտով խոցվածներըն ըժըշկել։ Ղուկ. գ. 19։

Աշխ։ Կարծումեմ թէ էս ամէն բաներս մին խիստ շատ չարագործ մեղաւորի կամ կռապաշտի են հարկաւոր. բայց ես միշտ մին քիչ այ վախով եմ վարել իմ կեանքըս. միշտ ժամ գնացի, և միշտ հաւատացի։

Քահ։ Շիտակըն ասումեմ քեզ. ես վախումեմ թէ դու իսկի մին ժամանակ չի հաւատացիր ինչպէս որ արժան էր։ Բայց սորա համար շատ բան ունիմ քեզ հետ խօսելոյ ուրիշ ժամանակում։ Լիմիկ յայտնի է որ քո ապաշխարութիւնըդ ճշմարիտ չէլաւ. պատճառն որ իսկի մին ժամանակ չի տեսիր կամ ճանաչեցիր քո անձնիդ կորուստըն. և նրահամար չիկարացիր բոլոր սրտով ցանկանալ որ ազատվիս նորանից ինչպէս որ հարկաւոր է։ Լու էս պատճառովս միշտ քո անձըդ խաբեցիր՝ յոյս ունելով թէ քո վիճակդ բարի է, կամ յատուկ բարի լինելու է, թէ որ

մինակ մին քիչ լաւ կենցաղավարվելիր։ Այս էս՝ Ճշմարտապէս քեզ վերայ յոյս դնելոյ մեղք է։ Բայց ապաշխարութեան ուրիշ նշաններին մտիկ տալով՝ ինչպէս մեղքից հեռանալոյն, դու լաւ դիտումես որ առանց հոգս քաշելոյ կենցաղավարվելոյիր մին քանի սովորական մեղքերին մէջ. և դէպի Աստ դառնալոյն վերայ մտիկ անելով՝ դու իսկի մին ժամանակ չի Ճանաչեցիր կամ չիմացար թէ քո ցանկութիւններին հետևելով՝ հեռացել ես նորանից։ Ուղղորդ որ՝ թէ և երևումէ թէ չի Ճանաչեցիր նորան, բայց էն յատուկ բնութիւնը որ քեզանում, և ամէն շնչաւոր մարդկանց միջին կայ՝ մին էնպիսի բնութիւն է, որ նորանից մեղք և ապականութիւն է դուրս գալիս։ Ինչուոր այ կամքը խնդրելոյ տեղն՝ ամէն կերպով քո անձին կամքը խնդրեցիր՝ որ քո ապականված բնութիւնը դարմանաւոր ուրախութեանով և հարստութեանով, աշխարհական պատվով և հանգստութեանով՝ և սրանց նման ուրիշներով ուրախացնես. հենց էս էլաւ քո բոլոր կենցաղավարութեան յատուկ դիտաւորութիւնն, թէ և հակառակ էր էն պատվիրանքին՝ որ հրամայումէ թէ՝ Ամենը այ փառքին համար պէտք է անէք։ Ա. Կորնթ. Ժ. 31։ Մանաւանդ թէ որ քո անձը լաւ քննես, քո սրտիդ միջումն յատուկ թշնամութիւն կը գտնես դէպի Աստ։ Պատճառը որ էսպէս է ասում առաքեալն՝ Մարմնոյ խորհուրդն թշնամութիւն է դէպի Աստ։ Հռովմ. Ը. 7։ Եւ էս թշնամութիւնս յայտնի ցոյց է տալիս իրան՝ նորանով որ այ կամքին՝ հակառակու-

մէ՝ էն բանըն անելով՝ որ նա արդելեց, և էն բանըն թողանելով՝ որ նա պատվիրեց. և էլ նորանով որ փախչումենք ՝ՃԾանից ինչպէս մեր թըշնամուց, և որ ջանք ենք անում մեր անձներըս նորանից թագցնել ինչպէս ադամ։ Մի թէ անց չիկացրած օրեր և բոլոր շաբաթներ որ իսկի մին բան չի մտածեցիր ՝ՃԾանից սրտի ջերմեռանդութենով, թէ և էն ամէն ժամանակումն անխափան նորա ձեռքիցն ողորմութեան շնորհք ընդունեցիր. մի թէ էսպիսի խորհուրդները դէն չի քըցեցիր և չի խեղդեցիր երբոր քո միտքդ էին գալիս. մի թէ ՝ՃՅ և յաւիտենական կեանքի կամ պատժի համար միտք անելուցն չի փախած ինչպէս քո խաղաղութիւնըդ չիկամեցող թշնամուցն, և նորանց խեղդեցիր աշխարհական հոգս անելովն, դատարկ խօսակցութենով և ունայն խաղ և ուրախութիւն անելով։ Մի թէ էս կերպով չի փախած ՝ՃԾանից։ Հա՛, լաւ գիտումես որ Ճշմարիտըն եմ ասում։ Ուրեմն թող արա ինձ որ համարձակ խօսիմ քեզ հետ. ինչուոր մինչև հիմիկ մոլորվածման եկիր և քո անձնիդ կորուստըն չի Ճանաչեցիր. քո անձըդ խաբեցիր, և քո հոգւոյ հետ խաղաղութիւն էիր խօսում, դեռ քանի որ խաղաղութիւն չկար։ Ե՛կ ուրեմն միտք արա էն՝ որ ինձանից լսեցիր, քո ՝ՃԾաշունչ գիրքըդ կարդա՛, քո անձըդ քննիր, և աղաչի՛ր ՝ՅՅ որ շնորք տայ քեզ՝ որ քո իսկական վիճակըդ Ճանաչես, և ամէն կերպով ուղիղ դատաստան և քննութիւն անես։

ԵՐԿՐՈՐԴ ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆ։

ՔԱՀԱՆԱՅԻՆ ԱՍԷ։

Բարեկամ, ես յոյս ունէի որ աւելի շուտով տեսնէի քեզ. որ մինչեւ խօսինք էն շատ հարկաւոր բաներին վերայ։

ԱՂՇԱՐՀԱՅԻՆ ՏԱՐԲԵՆ ԱՍԷ։

Ճշմարիտ է տէր՝ թէ համարձակիմ Ճշմարիտըն խոստովանիլ, պէտք է որ ասեմ, թէ էն բանըն որ դու ասումէիր՝ էնքան չէի սիրում որ ցանկանայի մին անգամ էլ լսել նորան։ Եւ հենց հիմիկ էլ քեզ մօտ չէի գալ՝ թէ որէն մին բանի համար չիլլնէր, որ ես մէկէլ օրն քո քարոզութեան մէջն լսեցի։

ՔԱՀ։ Խիստ շատ հաւանում եմ քո էդ պարկեշտ համարձակութեանդ, սիրելի։ Բայց էն ի՞նչ էր որ նորանով ես տրտմացրի քեզ։

ԱՂՇ։ Ես կարծեցի թէ դու խիստ սաստիկ յարձակվելէիր ինձ վերայ. և շատ վախեցայ՝ որ չէլնի թէ իմ բոլոր սիրտըս տրտմութենով լցնես։

ՔԱՀ։ Ա՞ռ կարծում թէ ամէն ինչ որ քեզ հետ խօսեցի՝ քո հոգւոյ սէրիցն շարժված խօսեցի։

ԱՂՇ։ Հա՛ Ճշմարտութենով հաւատում եմ թէ սիրով շարժված խօսեցիր։

Քահ։ Կարծումես թէ մին բան խօսեցի որ ճշմարիտ չէ։

Ալշի։ Հա՛ էն ժամանակն էնպէս էի համարում. պատճառն որ՝ երևումէր ինձ թէ շատ խստութենով դատումէիր ինձ. և ինձ ամէն վատ մարդկանց հաւասար էիր համարում։ Բայց հիմիկ յայտնի իմացած խոստովանումեմ՝ թէ ինչ որ ասումէիր ամէնն ճշմարիտ էր։

Քահ։ Ուրեմն ի՞նչ բան էր որ էդպէս քո խորհուրդներըդ փոխեց։

Ալշի։ Քո մէկէլ օրի քարոզն՝ որ ահաւոր դատաստանի օրին համար խօսեցիր. շատ շլոթվեցայ էն խօսքըն լսելով։ Պատճառն որ խիստ վախում եմ. որ վերջին դատաստանի օրն հենց հիմիկ հասնէ, ինձ անպատրաստ կըդտնէ։ Եւ էն ժամանակն ի՞նչ պիտի լինի. էս մէնակ, որ կարող եմ ասել թէ՝ Տէ՛ր ողորմիր իմ խղճալի հոգւոյս։

Քահ։ Էն ժամանակն շատ ուշ է որ աղաղակես և ողորմութեան յոյս ունենաս։ Բայց մասնաւորապէս էն ի՞նչ էր որ քեզ շարժեց էդ կերպովդ քո անձըդ դատել։

Ալշի։ Էն՝ որ դու ինքն մեզ ցոյց տըվիր ը՝ մատթէոսի քսան և հինգ գըլխիցն՝ թէ դատաստանն նորանով կըսկսէ, որ արդարներն մեղաւորներիցն կըջոկվին, և թէ էս ջոկվիլս՝ էն ջոկվելուցն է ծագում, որ էս կենացս միջումն գործվել է՝ երբոր արդարներն վերկանըվին մեղաւորների միջիցն, մեղաւորների գործքըն և ընկերու-

թիւնքն խսպառ թողանելով։ Բայց ես ինձա-
նում էսպիսի փոփոխութիւն չեմ գտնում. և նը-
րահամար շատ վախումեմ թէ չըլինի որ դեռ
մեղքի էն վիճակումն եմ՝ որ նորանում ամէն
մարդիք հենց բնութեամբ կան. ինչպէս որ դու
ասացիր։

Քոհ։ Ուղղրդ որ շատ վախենալոյ պատճառ
ունիս։ Զեզ ասացի թէ նորանք մէնակ արդար
կըհամարվին էն օրումն՝ որ արդարութեան ցան-
կանալով՝ փախան Տէր Յիսուս Քրիստոսի մօտ,
որ արդարանան և փրկվին նորանով. որ Աստու-
ծոյ հոգւովն սրբվեցան, որ նա նորանցում նոր
սիրտ հաստատեց, և որ նորանք սուրբ քաղաքա-
վարութենով յայտնի ցոյց տըվին էս մեծ փոփոխ-
մունքըս իրանց մնացած կեանքումն, թէ և նո-
րանց մեղքերն առաջ շատ և մե՛ծ էին։ Բայց մե-
ղաւոր նորանք կըհամարվին էն օրումն, որ ապ-
րեցին՝ և մեռան առանց Քրիստոսի կենդանի հա-
ւատքին, և որ այ հոգին չիընդունեցին իրանց
սրտերումն, թէ և նորանց կենցաղավարութիւնն
շատ պարկեշտ և դրսևանց բարեգործ էր։

Ղազ։ Ճշմարիտ է՝ հենց էդ էր որ ինձ վա-
խով լցրուց։ Ինչու որ ասացիր մեղ՝ թէ և մին
մարդ շատ բարեգործ լինի, բայց նա էլ էնքան
մեղք է արել՝ որ արժան է դատապարտվելոյ՝ թէ
որ առանց Քրի հետ հաղորդութիւն ստանալոյ
մեռնի, և առանց ընդունելի լինելոյ այ առաջին
ինչպէս Քրովն արդարացած։ Բայց էս ողորմու-
թիւնըս և էս ընդունելի լինելըս որ Յրի Քրի

ձեռամբ կատարվեցաւ՝ թէ որ մինն մեռնելուցն առաջ ստանայ, ապա նորա մեղքերն չեն յիշվիլ նորա երեսին դէմ՝ էն օրումն։ Եւ էս բանըս իսպառ հաստատելոյ համար՝ մեզ ցոյց տըվիր թէ վերջին օրումն ինչպէս որ սուրբն Մատթէոս պատմումէ, դատաւորն արդար մարդկանց իսկի մին մեղքըն էլ չյիշիլ, և ոչ էլ ամբարիշտ մարդկանց մին բարի գործքըն։

Քահ։ Ամբարիշտներին՝ այսինքն նորանք որ կենումեն և մեռնում առանց խոնարհութենով Ճանաչելոյ իրանց բնական ապականութիւնըն և գործված մեղքերըն, մինչև որ իսկի մին ժամանակ պահպանվելոյ համար չիդնացին հաւատքով դէպի ՅՀ ողորմութիւնն որ Քրիստոնն է պատրաստված, շիտակն եմ ասում՝ որ էնպիսի ամբարիշտներն իսկի մին յիշելոյ արժանաւոր բարի գործք չունին. պատՃառն որ, ինչ որ նորանք անումեն ծուռ դիտաւորութենիցն է դուրս գալիս. ինչուոր՝ կամ անձնասիրութեան և աշխարհական ցանկութեանց համար էն անում, և կամ նորա համար որ Քրիստի հետ մին հաղորդութիւն, և իրանց մեղացն թողութիւն ստանան ՅՀ առաջին իրանց բարի գործքերուն. որ յայտնապէս ցոյց է տալիս թէ նորանք՝ փրկութիւնըն գործքերի օրէնքովն են խնդրում։ Եւ նրահամար նորանց գործքերըն ոչինչ կըհամարվին. ինչուոր հաւատքով չի գործվեցան, և սիրոյ աղբիւրիցն չի բղխեցին. որ նորան ոչով կարող չէ ունել քանի որ Քրիստի հետ միաւորված չէ. որ նա է Ճշմարիտ որթն

(Լոպ) և հաւատացեալներն ուռ (Տոպն) որ կեան-
քըն նորանից են ընդունում՝ (Յովհ. ԺԷ.) և
առանց նորան մենք ոչ ինչ կարենք անել՝ որ
ընդունելի լինի ամ առաջին։ Բայց միւս կող-
մից՝ արդարներն որովհետև ընդունելի էլան
Քրիստոսին, նրահամար էլ չեն յիշվիլ նորանց մեղ-
քերըն. պատճառն որ շատ ժամանակից առաջ
թողվեցան և խսպառ ջնջվեցան, և նորանց կիսա-
կատար ծառայութիւններն ընդունելի են լինում
իրանց Քահանայապետ Յեսի ձեռքին. որ նորանց
անօրէնութիւնները իրան վերայ առաւ, և շը-
նորհաց վարձք ընդունին առատ շնորհք բաշխող
դատաւորի ձեռքից։ Ուրեմն էն որ յատուկ ջո-
կումն արդարներըն ամբարիշտներից էս է. որ
մինն ընդունելի էլաւ ինչպէս արդար, և թողու-
թիւն ստացաւ Քրիստոսին նոր՝ կամ աւետարանա-
կան ուխտ և պայմանովն. բայց մեկէլն իսկի մին
ժամանակ կատարեալ չի ճանաչէց իրան մեղան-
չական և կորստական վիճակըն, և էլ ամբար-
տաւանութենով լցված՝ չի խոստովանեց։ Նա
էլ չի հետևում էն ողորմութիւնըն խնդրել որ
աւետարանումն յայտնի գրված է, և էստուր հա-
մար դատաստանի օրումն կըդտնվի հին օրինաց
և գործոց պայմանի հիմունքին վերայ կացած.
որ կատարեալ հնազանդութիւն է խնդրում։
Այս ուրեմն նա առանց միջնորդի է, և մեղաց
թողութիւն չունի, և նրահամար յատուկ սի-
տի դատապարտվի։

Ամէն։ Թէ որ էդպէս է, ապա իսկի պէտք
չէր որ մեր գործքերն յիշվին։

Քահ։ Այդ բանիդ համար երկու պատճառներ առաջ կբերեմ քեզ համար։ Առաջ՝ որ թէև գործքերն հիմն և պատճառ չեն՝ որ մին մարդ փրկվի և ընդունելի լինի, բայց նորանք ցոյց են տալիս եթէ մարդն արդարացած վիճակի մէջն է՝ թէ չէ. պատճառ որ մենք կարող չենք սրբուլթեան պտուղ բերել՝ թէ որ Քրիստոսը չըլինինք և նորա միջումն բնակված։ Կայէք ինձանում՝ և ես ձեզանում. ինչպէս որ ուռը (տոպն) կարող չէ իրանից պտուղ բերել՝ եթէ որ որթումն (վազումն) հաստատված չըլինի, էնպէս էլ դուք՝ եթէ որ ինձանում հաստատված չըլինիք (Յովհ. ԺԵ. Դ)։ Այս նորանք որ արդարուլթենով չեն կենցաղավարվում՝ իրանց անձներըն խաբում են, եթէ իրանց արդար համարին. ինչուոր բարի գործքերն նշաններեն որ հաւատացեալներին ջոկումն անհաւատներից։ Երկրորդ՝ բարի և օգտակար գործքերի զանազան աստիճաններն հենց յատուկ արդարների մէջնէլ զանազանուլթիւն են անում. մինչև որ Աստուծոյ ողորմուլթիւնն էլ հաւանումէ նորանց զանազան փառքի աստիճան բաշխել։ Թէ որ մին մարդ իսպառ փրկվի՝ էն նորա հաւատքի պտուղն է որ փրկէին հաւատումէ։ Բայց նորա փառքի աստիճանն՝ նորա պտուղ տալոյն կեօրէ, և նորա ջերմեռանդուլթենով այ այդիին մէջ աշխատելոյն կեօրէ կըչափվի և կըհաստատվի։

Ա. Հոգ։ Էս միշտ կարծումէի՝ թէ մենք քրիստոնեայքս ամենքս էլ ճշմարիտ հաւատացեալներ

ենք, և թէ՝ մեր միջումն իսկի ջոկութիւն չըկայ, և թէ ահաւոր դատաստանի օրումն նորանք կը-համարվին արդար՝ որ օրինաւոր և բարեգործու-թենով կենցաղավարվեցին. որ ես ինձ՝ և էն ամէն-քին էլ որ ինձանից էլ բարի էին, նորանց մէջն էի համարում, և թէ՝ մենակ ամբարիշտներն և անհաւատներն և էն ամէնքն՝ որ ծածուկ անի-բաւ և չարախորհուրդ էին՝ կըդատապարտվին։ Իրաւի որ միշտ մին վախ ունէի՝ թէ լինի որ էն-քան բարի չեմ էլել որքան պէտք էր լինէի. և չէի գիտում թէ շատ մարդիք ինչպէս պիտի արդար համարվին, բայց կարծումէի թէ իմ վի-ճակս բարի է քան շատերին և քան էլ շատ շա-տերին՝ որ նորանց ճանաչումէի ես։

Քահ։ Լոդ քո մտածմունքըդ Աստուծոյ բա-նից չես սովորել։ Բայց հիմիկ լաւ ես մտածում։

Ալլի։ Տեսնումեմ՝ որ ամէնն էլ նորանից է կախվում, որ դեռ քանի աշխարհքումս եմ ողոր-մութիւն և թողութիւն գտնեմ իմ ամէն անց-կացած մեղացս համար, և էլ՝ էն չէ թէ իմ գործքերի արժանաւորութենովն կարող եմ ըստա-նալ. բայց մենակ էն հաւատքովն որ Յ Քնին հաւատումեմ։ Բայց թէ էն հաւատքն ինչ է, չեմ գիտում. ես մենակ եմ գիտում՝ որ խսպառ ճանապարհին դուրս եկած էի։

Քահ։ Իրաւի որ դուրս եկած էիր. և հենց հիմիկ հասել է ժամանակն որ զարթնիս, և սըբ-տի ամէն ջերմեռանդութենով ման գաս Տէրին.

որ չըլինի թէ դեռ որ մեղքի մէջ վէր ընկած լինիս՝ քեզ վերունի և քո բաժինըն անհաւատներին հետ դնէ, որ տեղ որ լաց լինելն և ողբալն և ատամների կրճտելն է։

Ա. Աղաչումեմ տէր, ասա՛ ինձ թէ ի՞նչ պիտի անեմ՝ որ փրկվիմ։

Քահ։ Ի՞նչ ես մտածում քո անցկացած կեանքին համար։

Ա. Տեսնումեմ որ օրէ ցօր միշտ բարկացրել եմ Աստուծոյն՝ նորա պատուիրանքներըն քանդելով, և իմ անձին կամքըն աւելի քան թէ նորա կամքըն կատարելով, և հենց հիմիկուց հաղարաւոր մեղաց պատիժի տակ ընկած կամ, որ նորանցից շատ պուճուրն բաւական է ինձ դատապարտել թէ և էլ ուրիշ քան արած չըլինիմ։

Քահ։ Ապա ի՞նչ ես մտածում քո բարի գործոց համար։

Ա. Ի՞նչ մտածեմ. մէնակ մեղք եմ տեսնում իմ ամէն գործքերումս. պատճառն որ իմ ամբարտաւանութիւնս՝ որ ես ինձ աւելի բարեգործ էի համարում քան ուրիշներըն, իմ աշխարհասիրութիւնս, ունայն բաների ցանկութիւնս, և իմ մտաց ցրվիլն աղօթքի և քարոզութեան ժամանակումն, նորանք բաւական են դատապարտել ինձ՝ թէ և ուրիշ մեղք գործած չըլինիմ։

Քահ։ Ուրեմն ի՞նչ ես ուզում անել։

Ա՛ղջ։ Պամենումեմ որ աւելի լաւ կեանք վարեմ, մեղայ հետ կռվիմ, և աղօթք անեմ։

Քահ։ Բայց թէ որ էս ամէն պարտաւորութիւններս՝ ինչպէս որ դու ինքդ ասացիր՝ մինչև հիմիկ մեղայ հետ խառնվեցան, ապա ի՞նչպէս յոյս ունիս որ նորանք հիմիկ ընդունելի անեն քեզ։ Կամ թէ և շատ լաւ կատարես քո էդ գործերը, էլի էդ ամէնդ քո հարկաւոր պարտաւորթիւնդ է, և դրահամար թէ և կարողանաս բարի գործքեր անել՝ նորանք կարող չեն մին ուղղութիւն շնորհել քեզ էն անցկացած մեղայդ համար։ Այս ամէնս պատճառովն իսկի մին մարմին կարող չէ օրէնքի գործքերովն արդարանալ։ (Հռոմ. գ. 20։)

Ա՛ղջ։ Ճշմարիտ է որ իսկի մին ճանապարհ չեմ տեսնում իմ առաջիս. ուրեմն եթէ մին ժամանակ մին խեղճ և մեղքով կորուսված մարդ էլաւ, էն յատուկ ես եմ։ Ուրեմն ի՞նչ պիտի անեմ։

Քահ։ Հաւատա՛ Տէր Յ՚ Քրիստոսին՝ և կապրիս. (Գործ. ԺԶ. 31։) Այ՛ս է ՚՚՚ գործն, որ հաւատաք նորան՝ որ նա ուղարկեց։ (Յովհ. զ. 39։) Սորանով ամէն ով որ հաւատայ՝ կարդարանայ (Գործ. ԺԳ. 39)։ Ուրեմն էդպէս մերկ՝ աղքատ՝ մերկաւոր՝ և անօգնական ինչպէս որ ես՝ եկ Աստուծոյ մօտ՝ որ Քրիստովն ողորմութիւն գտնես։ Պատճառն որ նա կարող է կենդանի անել ամէնին որ նորանով Աստուծոյ մօտ են գնում. ինչու որ միշտ կենդանի է՝ նորանց համար բարեխօսութիւն անել։

(Լ.Բ. Է. 25։) Նա կարող է քո ամէն մեղաց պըղծութենիցն և դատապարտութենիցն լուանալ քեզ. քո մեղաց զօրութիւնըն և իշխանութիւնըն քանդելով քեզանում. և քեզ խպաս ՝ի շինել թէ մարմնով՝ թէ շնչով՝ և թէ հոգւով և յիստակ և մաքուր կանգնացնել Հօր առաջին։

Ա.Հայ։ Իսկի մին տարակուսանք չունիմ Քրիստոսի զօրութեան համար թէ կարող է փրկել. պատճառն որ նա Աստուծոյ որդին է. բայց վախում եմ թէ մին էնալիսի մարդ չեմ որ կարենամ փրկվիլ։

Քահ։ Այդ բանըդ շիտակ իմանալոյ համար նայիր Աճաշունչ գրքի մէջն. ինչուոր էն տեղն գրված է՝ Քրիստոս աշխարհքս եկաւ մեղաւորներըն փրկելոյ համար (Ա. Տիմ. 15)։ Հիմիկ ի՞նչ ես ասում։ Մի թէ դու է՞լ նորանցից մինն ես որ նա եկաւ փրկել նորանց, թէ չե՞ս։

Ա.Հայ։ Բայց նա չիկամենում, և հենց իսկի էլ չի փրկել ամէն մեղաւորներըն։

Քահ։ Այդ նրա համար է՝ որ նորանք չենկամենում դալ նորա մօտ որ փրկվին։ Այս բանիս համար նա դանդատումէ՝ ասելով. դուք չէք ուզում ինձ մօտ դալ՝ որ կեանքըն ունենաք։ (Յովհ. Է. 40։)

Ա.Հայ։ Բայց մի թէ գրված չէ՞ թէ՝ Ապաշխարեցէք և հաւատացէք աւետարանըն. և թէ՝ ով որ հաւատայ և մկրտվի կապրի։ (Մարկ. Ա. 15.

Ժ. 16։) Ապա ես վախումեմ՝ որ չըլինի թէ էս պատուիրանքներըս չեմ կատարում։

Քահ։ Թէ որ մեղաց բեռնովն ծանրացել ես՝ և նորան կամենումես դէն քցել, և ջերմեռանդ սրտով ցանկանում ես որ փրկվիս նորա դատապարտութենից և պղծութենից, ապա ճշմարիտ ապաշխարութիւնն սկսել է քեզանում։ Եւ եթէ էս դիտաւորութենով և ցանկութենով Քրիստոսն մօտենաս ինչպէս որ նա աղքատ մեղաւորի համար ցոյց է տըվել աւետարանումն, ապա էդ է էն հաւատն՝ որ փրկումէ։ Ուրեմն եկ Քրիստոսի մօտ որ ընդունիս նորա լիութիւնից ներքին և հոգևոր շնորհքն՝ որ նորանով մեղաց համար մեռնիս, և արդարութեան համար նոր ծնվիս. ինչուորդ՝ նա մենակ կարող է էդ շնորհել։

Աշխ։ Ասած է թէ՝ շատ մարդիք կըխնդրեն մտնիլ (արքայութիւնն՝) և չեն կարենալ (Ղուկ. Ժ. 24։) և թէ՝ ոչ թէ ամէն ով որ ասումէ ինձ Տէր Տէր, կըմտնէ երկնքի արքայութիւնն։ (Մատ. է. 21։) Այս է որ վախով ըսնումէ իմ սիրտս, և ինձ փրկութենից շատ հեռի է թողում։

Քահ։ Ապա ուրմ մօտն ես մտածում փախչիլ։

Աշխ։ Այս չեմ գիտում. պատճառն որ էլ ուրիշ անուն չկայ երկնքի տակումն, որ նորանով կարելի լինի մինն փրկվիլ։ (Գործ. Դ. 12։)

Քահ։ Ուրեմն մօտացիր Քրիստոսի որ փրկվիս մեղաց պտուղից, օրէնքի անէծքից, և այ բար-

կութիւնից. փախիր նորա մօտ որ նորանից ընդունես թողութիւն և խաղաղութիւն. շնորհք և փառք։ Եւ եթէ խնդրելն բաւական չըլինի արքայութիւնն մտնելոյ համար՝ ապա ջանք արա։ Եթէ շատերն որ ասումեն Տէր Տէր՝ փրկութիւն չեն գտնիլ, ապա թող քո սիրտդ քո բոլոր կեանքումդ կանչէ դէպի տէրն՝ և նորան աղաչէ որ նորա անունն քեզ փրկէ։ Բայց էս ամէնիս վերայ՝ չէ թէ մին ջանք կամ կարողութիւն որ քեզանիցդ է՝ էն է որ քեզ ընդունելի է անում, բայց քո հաւատքդ եթէ ճշմարիտ՝ կենդանի և փրկարար լինի՝ ապա բոլոր բարի գործքերդ էն հաւատքին կըհետևին։

ԱՀԼԻ։ Այս է որ սորանից վախով լըցվեցայ՝ թէ չըլինի որ իմ հաւատքս ճշմարիտ հաւատք չէ։

ՔՈՀ։ Եթէ քո հաւատքդ ճշմարիտ լինի՝ ապա յոյսդ իսկի մին բանի վերայ չես դնիլ որ քեզանիցդ է, ոչ գործքերիդ վերայ և ոչ քո անձին կարողութեան վերայ. բայց քո յոյսդ մէնակ այ ողորմութեան վերայ կըդնես որ Քրիստոսն խոստացաւ։ Եւ էլ ճշմարիտ հաւատքն մին կերպով ջերմեռանդ և կենդանի կըլինի, որովհետև ցոյց կըտայ իրան՝ նորանով որ այ և աստվաշտութեան նախանձոն վառված է, և քաջութենով կռվումդ մեղաց դէմ։ Եւ էլ փրկարար կըլինի սա որ հենց նորանով կըփրկվիս՝ չէ թէ մէնակ դատապարտութենիցն, բայց էլ մեղաց զօրութենիցն և քո աշխարհական ցանկութիւններիշխանութենիցն, և սա կըշնորհէ քեզ մին բար-

ըի յոյս՝ որ կարենաս հաստատ հաւատալ թէ կը-
փրկվես բարկութենիցն Տէր Յիսուսի ահաւոր
դատաստանի մեծ օրուն։

Ա. Շ։ Չեմ գտնում ինձանում թէ ես հաւա-
տըս ունիմ, և նրահամար չեմ համարձակվում
հաւատալ թէ Ա. Ծ իմ մեղքերըս կըթողէ ինձ,
և ինձ կընդունի։

Քահ։ Ա՛կ ուրեմն Քրիստոս՝ և այ խոստմունք-
ներըն որ Քաւուն են, սիրեդ բռնիր և ընդու-
նիր և նորանց վերայ ապաւինիր՝ որ քո հաւատ-
քըդ Քրիստոնէն մինչև ես կատարելութիւնս
աճէ։ Պատճառն որ՝ ես հաւատքս ինքն յա-
տուկ այ հոգւոյ զօրութենիցն է, և նրահամար
հենց նորանից պէտք է աղօթքով խնդրել Յի-
Քրիստոսի միջնորդութենովն։

Ա. Շ։ Ես չեմ համարձակվում այ խոստմունք-
ներըն էդպիսի հաստատութենով բռնել և ընդ-
ունել՝ Քրիստոս դալ՝ և նորա վերայ յոյս դնել.
ինչուոր յատուկ անարժանեմ հենց էն շատ փո-
քըր ողորմութեան էլ։

Քահ։ Ուրեմն ե՞րբ ես կարծում թէ քո ան-
ձըն արժանաւոր կանես։

Ա. Շ։ Ի՛սկի մին ժամանակ։

Քահ։ Ուրեմն նորա մո՛տ եկ ինչպէս որ հենց
հիմիկ ես. որ նա արժանի անէ քեզ։

Ա. Շ։ Մի թէ կարելի՞ է որ ես Քրիստոսի մոտ
գամ ինչպէս որ եմ, և փրկութեան համար յոյս
դնեմ նորա վերայ։

Քահ։ Պէտք չէ՛ որ իմ խօսքիս հաւատաս. քայց ՝ի՛ խօսքըն լսիր։ Նա՛ է հրաւիրում քեզ գալ. ասելով՝ Դուռք որ ծարաւ էք դէպի ջուրըն եկէք (Եսայ. ԾԵ. 1։) Նա՛ է հրամայում քեզ գալ. ասելով՝ Այս է նորա պատուիրանքն՝ որ նորա որդւոյ Յի՛սի Քրիստոսի անունին հաւատանք։ (Ա. Յոհ. Գ. 23։) Նա՛ է խոստանում որ ընդունի նորանց որ իրան մօտն են գալիս. ինչուոր ասումէ. Ով որ ինձ մօտ գայ, դուրս չեմ հանիլ։ (Յովհ. Զ. 37։) Նա պատիժ է խոստանում թէ որ չըգաս. ասելով՝ Ով որ չհաւատայ կըդատապարտուի։ (Մարկ. Զ. 16։)

Ամշի։ Բայց ո՞ւմ են ասված էս խօսքերս։

Քահ։ Քեզ՝ ինձ՝ և ամէնին որ էս խօսքերըս լսումէ. ինչուոր գրված է՝ թէ Քարոզեցէք աւետարանըն ամէն ստեղծուածներին։ (Մարկ. Զ. 15։) Եւ մանաւանդ նորանց են ասված էս բաներս՝ որ տեսնումեն թէ իրանք փրկութեան կարօտ են. ինչու որ նորանք մէնակ կընդունին սորանց։ Նրահամար մին էլ ասումէ՝ ինձ մօտ եկէք ամէն վաստակածներ և բեռնաւորներ՝ և ես հանգիստ կըտամ ձեզ։ (Մատ. Ժա. 28։)

Ամշի։ Ա՞ճաշնչի էդ խօսքերդ իմ բերանս պապանձացնումեն։ Բայց հենց էսպէս էլ չեմ կարում հաւատալ՝ թէ Քրիստոս կընդունի էն պիսի մեղաւորըն՝ ինչպէս որ ես եմ։

Քահ։ Այս էր որ սորահամար առաջ ասացի քեզ՝ թէ Հաւատքն մարդից չէ, քայց ՝ի՛ պարգև

է որ ՝ի՝ Հոգւոյն կըտըվվի նորանց՝ որ աւետա-
բանըն լսումեն։ Ուրեմն թէ սորան՝ և թէ ՝ի՝ այ
ամէն շընորքներըն խնդրիր աղօթքով Յ՝ի՝ անու-
նովն։ Եւ որ ժրանաս աղօթք անելոյ և յոյս
ունելոյ համար՝ միտք արա թէ ՝ի՝ ած հենց սորա
համար տըվաւ Քրիստին, որ մեղաւորներըն փրկէ.
սորա համար նա եկաւ աշխարհքս, սորա համար
վաստակեց՝ լաց էլաւ՝ և իրան արիւնըն թափեց,
սորա համար է թագաւորութիւն և բարեխօսու-
թիւն անում երկնքումն։ Նա էնքան ցանկանում
ամէն մեղաւորներըն փրկել՝ որ էլ բարկանում
նորանց վերայ որ չեն կամենում նորա մօտ դալ
որ փրկվին։ Եւ դեռոր ինքն երկրիս վերայ էր
լաց էլաւ երուսաղէմի վերայ հենց սորա պատ-
ճառովն։

Ա. Հ։ Ես գիտում թէ ինչ ասեմ։

Քահ։ Ի՞նչ ես մտածում որ անես։

Ա. Հ։ Շատ վախումեմ որ չըլինի թէ խսկի
չըփրկվիմ։ Բայց գիտումեմ որ էլ ուրիշ ճա-
նապարհ չըկայ՝ բայց մէնակ ՝ի՝ ձրի (անփող) ողոր-
մութիւնն որ Քրիստում է։ Եւ նրահամար կըխնդ-
ըրեմ նորան քանի որ կենդանի եմ. և եթէ կոր-
չիմ, թող Քրիստոսի խաչի տակն կորչիմ ողոր-
մութիւն կանչելով։

Քահ։ Աստուած հաստատէ քեզ էս մտքիս
վերայ, և ապա էն ամէն բաներըն կըստանաս որ
նա աւետարանի մէջն խոստացել է։ Բայց ար-
թուն կաց՝ չըլինի որ թող անես էս իմացվածդ

բաներըս որ հիմիկ քո որտումդ տպաւորված են. կամ չըլինի թէ մին սուտ և ոչի՛նչ խաղաղու թեան վերայ դնես քո յոյսդ։ Հանգիստ չըխընդրես ուրիշ բանում. բայց միմակ Քրիստոսումն։ Արթուն կաց՝ որ չըլինի թէ աշխարհքի կըաղմունքն և ուրախութիւնները քո միտքըդ ծռեն և հեռացնեն ամենայն բաներից, և չըլինի թէ մեղքով տրտմացնես սուրբ Հոգին։ Միտքըդ բեր՝ որ գրված է՝ թէ որ մինն տարակուսված լինի, իմ անձն նորան չի հաւանիլ։

(Լ՝Բ՝ Ժ. 38)

ԵՐՐՈՐԴ

ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆ։

Ամենաբարձրեալն Տէրդն ասէ։

Տէր յոյս ունիմ թէ չըտրտմիս էս նեղութեան համար որ տալիս եմ քեզ. ինչու որ շատ կարօտ եմ քո խրատներիդ։

Քահանայն ասէ։

Սիրելի պէտք չէ՛ քեզ որ իմ երեսիս պատիւ տաս. ինչու որ շատ ուրախ կըլինէի թէ որ ամէն մարդ իմ ժողովուրդիս էդպիսի նեղութիւն հասցնէր ինձ՝ որ դու հասցնումես. բայց քս խնդիրդ ի՞նչ է։

Ամենաբարձրեալն։ Քիչ մի ժամանակ է որ էնպէս եմ էլած, որ իսկի մին ժամանակ առաջուց իմ ամէն կեանքիս մէջ էսպէս չեմ էլած. ինչու որ խիստ վախեցայ՝ թէ չըլինի որ դատապարտուած լինիմ։ Պատճառն որ՝ էս մտածմունքս իմ սիրտըս լըցրուց վախով և տրտմութենով դիշեր և ցերեկ։ Իսկի պէտք չէր որ դու իմացնէիր և խրատէիր ինձ աշխարհական հոգսերի և հեշտութիւնների համար։ Պատճառն որ՝ որտեղ որ էլայ՝ կամ ինչ որ արի՝ միշտ և ամէնտեղ իմ աչքերիս առաջին ունէի իմ մեղքըս և դժոխքի տանջանքըն։

Քահ։ Բայց ի՞նչ մտածեցիր քո մեղայ համար, կամ ի՞նչ լուսով յայտնըվեցան քեզ։

Ալշ։ Իմ մեղքերս որ շատ տարիներով առաջ գործել եմ՝ հիմիկ վերկացան ինձ վերայ և ինձ դատապարտեցին. և իմ երեխայութեան մեղայ յիշատակն իմ ետևէս եկաւ էնքան զօրութենով՝ ինչպէս թէ երէկ և մէկէլ օրն էի գործած։ Եւ մին քանի սարսափելի խօսքեր որ ահաշունչըն կարդայի և լսեցի՝ երևումէին թէ յատուկ իմ դատապարտութեան վճիռներն էին։ Եւ կարծումեմ թէ հարիւր անգամ մտածել եմ էս բանիս համար՝ թէ մեղայ վարձքն մահ է(Հռոմ.գ.23)

Քահ։ Ուրեմն քննեցի՞ր քո սիրտըդ, և տեսի՞ր և ողբացի՞ր էն ծուռութիւնըն և ապականութիւնըն որ նորանում է։

Ալշ։ Առաջ չիմացայ էդ խօսքիդ միտքըն՝ թէ ի՞նչ ես ցոյց տալիս էդ բառովդ «ողբալ»։ Բայց հիմիկ կարծումեմ թէ գիտեմ։ Պատճառն որ՝ ինձանում մին սաստիկ յանկութիւն եմ տեսնում դէպի շատ մեղքեր, թէ և ըրռնադատվումեմ ասել՝ թէ արժանի եմ այ բարկութեանն. նրահամար որ առաջուց ցանկութիւնների ետևէն գնացի։ Ուղորդ որ հիմիկ իմ որպիսութիւնս և վիճակս շատ լաւ է քան թէ առաջ։ Պատճառն որ առաջուց իմ սրտիս ամբարշտութիւնն ինձ քաշեց տարաւ դէպի ունայն ընկերութիւններ՝ և ոչի՞նչ խաղեր, դէպի խօսել ինձանից դատարկ և ունայն խօսքերով, աշխարհ-

քի բաներին ցանկալ և առանց մտածելոյ աղօթք անել՝ և կամ հենց խսպառ թէ աղօթքն և թէ ուրիշ պարտաւորութիւնները ոչընչի տեղ դնել ինչպէս մին ծանր բեռն, և ուրիշ մեղքերին էլ պարտաւոր լինել։ Բայց հիմիկ շնորհակալ եմ ածանից՝ որ առաջվան պէս չեմ. ինչու որ իմ ամէն խորհուրդներս և մտածմունքներս բարձրացել են դէպի իմ հոգւոյ համար և նոր եկող աշխարհքի համար հոգս անելն և պարապելն։

Քահ։ Ա. ասումեմ թէ դեռ քո սիրտը դ չես ճանաչում ինչպէս որ դու կարծումես։ Երևումէ որ կարծումես՝ թէ հիմիկ ամէն փոխեցաւ և նորոգվեցաւ քեզանում։ Բայց մի խաբվիր՝ ինչուոր էդպիսի պիղծ թռչունքի բունն ինչպէսոր ամէն մարդոյ սիրտն բնութեամբ է, շուտով չիսրբվել իրան կերպկերպ ցանկութիւններիցն և չար յօժարութիւններիցն։ Դորանք որ երևումեն թէ տակնահան պոկվել են, մէնակ մին ժամանակ հանդիստ են առնում. նրահամար արթուն կաց որ մին էլ չի վերկենան մինօրում։ Կարելի է որ դորանցից մին քանիսն էլ մէնակ փոխվել են ուրիշների հետ որ նորանց նման վատ և ինամակար են, ինչպէս որ ամբարտաւանութեան՝ հպարտութեան և ուրիշների հետ։

Ա. շ։ Ճշմարիտ է տէր՝ որ ես էլ վախում եմ թէ էդպէս լինի. պէտք է գիտենաս որ մին օր միտք արի թէ՝ երբան մեղաւոր եմ, և թէ ինչքան ողորմելի պիտի լինիմ նոր եկող աշխարհքումն, և էն ժամանակն էս բաներս խիստ

սաստիկ իմ միտքս եկին թէ՝ «Այս նորանց անօրէ-
նութիւններըն կըգժկեմ, և ձրի կըսիրեմ դո-
բանց։» Յատուկ գիտումեմ որ էս խոսքերս
ճշաշունչ գրքումն են, բայց կարում չեմ
գտնել նորանց։ Ի՛նչ որ լինի՝ շատ մխիթարու-
թիւն տուին ինձ. և էն ժամանակիցն մինչև
հիմիկ շատ հանդարտված եմ։ Մին բարեկամ
մարդ՝ որ նորա հետ խոսացի՝ ինձ ասաց թէ՝
էդ բանըդ պէտք է այ ներդործութիւն համա-
րել, և թէ սրանից ետև կարող ես քեզ դէպի
ճշ դարցած մարդ համարել։ Բայց վախումեմ
թէ ամբարտաւանութիւն լինի էս. ուրեմն դու
ի՞նչ ես ասում սորա համար։

Քահ։ Առաջ պէտք է ինձ որ մին ժամանակ
քո բնութեանդ և վարքիդ տեղեկանամ՝ որ յե-
տոյ էդ խնդիրքըդ մեկնեմ։ Էն բաներն՝ որ յի-
շեցիր՝ Ովսեայ մարգարէութեան միջի՛ն են. տասն
և չորս գլխումն. բայց կարելի է որ էդ՝ հենց
դերի դնացած հրէաների համար խոսված լինի.
բայց նորանք մին խոստմունք ունին իրանց մի-
ջումն որ ամենևին աւետարանի խոստմունքներին
նման է. և էնտուր համար ամէն խոնարհ ան-
ձին առաջի դրած է՝ որ հաւատով ընդունի նո-
րան։ Պատճառն որ մարգարէն՝ ինչպէս որ տես-
նումես 2—3. համարումն՝ յորդորումէ ժողովուրդ-
ին ապաշխարել և խոնարհվիլ (իրանց) մեղաց
համար. ասելով՝ Դարձիր իսրայէլ դէպի քո
Տէր Աստուածն. ինչու որ ապականվեցար քո
անօրէնութենով։ Ահա ձեզ հետ խոսքեր՝ և

դարձէք դէպի ձեր Տէր Աստուածն. և ասա-
ցէք նորան. վէր առ ամէն անօրէնութիւննե-
րըն, և մեզ շնորհքով ընդունիր... ինչուոր՝
անհայրն ողորմութիւն է գտնում քեզանում։
Ուրեմն ինչպէս որ Աստուած շնորհեց քեզ՝ որ
քո մեղքով լցված և անօգնական վիճակըդ ճա-
նաչես, և ցանկանաս դէպի նա դառնալ, ինչ-
պէս որ մարգարէն էլ խօսքով ցոյց է տալիս՝ թէ
էս է առաջուց պատրաստութիւն խաղաղութեան
պատասխանի ստանալոյ համար. ապա յոյս ունիմ
որ ներքև գրված խոստմունքն շատ պատճառ է
քեզ. էն որ ասումէ. Ես կբժշկեմ նորանց
անօրէնութիւնները, և ձրի կըսիրեմ նորանց.
պատճառն որ իմ բարկութիւնս յետ դարձաւ
նորանցից. 5։ Ու էլ յոյս ունիմ որ էն մխի-
թարութիւնն որ դու գտար՝ էս խոստմունքըս
հաւատով դէպի քեզ քաշելով՝ սրբ Հոգուցն է
բղխում. ինչպէս որ ես կարծումեմ թէ հենց
էն մեղաց ճանաչելն էլ՝ որ քեզ վախով և խո-
նարհութենով լցրուց երբոր մտածեցիր քո մե-
ղանչող լինելըն՝ և այդ դատաստանըն որ վրճ-
ռել է մեղաւորներին դէմ՝ էլի էն Հոգւոյ զօ-
րութենիցն է։ Պատճառն որ նա է որ աշխարհ-
քին յանդիմանումէ մեղաց համար և արդարու-
թեան համար (Յովհ. ԺԶ. 8—10։) Բայց ոչէք է
որ ես ասեմ քեզ էս բանըս՝ թէ էս ամէն իմա-
ցողութիւնների և սրտի շարժմունքի համար պի-
տի որ մարդ վախենայ. մինչև որ տեսնենք թէ
ինչ պտուղ կըբերեն սրտումն և կեանքումն։ Ին-
չուոր՝ թէ և սորանք հենց ժամանակ կըլինի որ

այ հոգւոյ զօրութենիցն են բղխում՝ և շատ ընդունելի են, երբ որ խիստ միաբանված են այ խօսքին հետ՝ ինչպէս որ քո հիմիկվան վիճակդ է. բայց հենց ժամանակ էլ կըլինի որ մեր հոգւոյ թշնամին էս երևելի մտածմունքներըս էնպէս է ձևացնում՝ որ խաբէ մեզ։ Եւ անհնար է ասել թէ քանի շուտով օգնական է լինում նորան մեր բանական խառնուածքն և բնութիւնն։

Աշխ։ Աղաչումեմ տէր՝ շիտակն ասա՝ ինձ թէ ինչ ես մտածում իմ որպիսութեանս համար։

Քահ։ Աստուծոյ շնորհայն երկու յատուկ նշաններ կան՝ որ նորանց իսկի կարող չէ սատանայն ձևացնել՝ և նորանք են. սէր՝ սուրբ սիրտ՝ որ միշտ և ամէն ժամանակ ատումէ մեղքըն՝ և յեռոյ՝ սուրբ կեանք՝ որ այ ամէն պատուիրանքներըն պահումէ և կատարում։ Ուրեմն ստացիր սրանց և քո կեանքովդ և վարքովդ ցոյց տուր՝ թէ քո սրտի մտածմունքներն և բերմունքներն սուրբ և մաքուր են։ Այս տարակուսանք չեմ ունենալ թէ դու փրկութեան ճանապարհումն ես հաստատված։

Աշխ։ Որչափ որ իմ սիրտըս գիտում եմ՝ չեմ կամենում որ Աստուծոյն բարկացնեմ իմ յօժար կամքովս, թէ և կարելի լինէր ինձ ամէն աշխարքըս ստանալ։ Նորանք որ երևումեն թէ նորա ծառաներն են, սիրումեմ նորանց,

և պատրաստ եմ որ երեսիս և ծնկներիս վերայ դնամ նորանց բարի անելոյ և ծառայելոյ, կամ ուրիշներըն էլ նորանց նման անելոյ համար։ Սիրումեմ որ նորա խօսքըն լսեմ, դէպի նա աղօթեմ, սուրբ և հոգևոր բաներից խօսիմ, և կարծումեմ թէ յօժարութենով կըմեռնէի՝ թէ որ Աստուծոյ կամքն լինէր։

Քահ։ Շատ լաւ՝ դորանք բարի նշաններ են։ Բայց էդ՝ քո սիրոյ առաջին ջերմեռանդութիւնըն է, և ոչ թէ միշտ էդպէս կըմնայ քեզանում։ Ինչուոր էդպէս էր իսրայէլացւոց համար կարմիր ծովըն անցկենալէն ետև, և գաղատացւոց համար և եփեսացւոց եկեղեցւոյ համար։ Բայց սորանք ամէնն էլ ցրտացան յետոյ, և նրա համար Աստուած շատ նախատինք տուաւ նոցա։

Աշ։ Տէր՝ յոյս ունիմ որ դու ինձանից էլ շատ լաւ գիտումես էն որ վնաս է տալիս ինձ. և էնտուր համար աղաչումեմ՝ ցոյց տուր ինձ թէ ինչ պիտի անեմ։

Քահ։ Ջանք արա որ քո կոչումըն և ընտրութիւնըն հաստատես և յայտնես նորանով որ թէ քեզ համար և թէ այլոյ համար արդարութեան պտուղ բերես բարի քաղաքավարութենով։

Իմ առաջին խրատն էս է. գնա խոնարհութենով քո ՝այ հետ։ Թող միշտ ամօթով ծածկէ

քեզ քո անցկացած մեղաւոր և յիմար կենաց յիշատակը։ Յիշի՛ր քո կենաց շատ ծանրացը-նող գնացքը՝ որ մինչև հիմիկ փչացրիր Աստ-նից հեռանալովն։ Թէև էն կենացդ ամէն ժա-մանակումն նա միշտ և հանապազ իրան ողորմու-թիւնը քեզ վերայ էր կիտում՝ և նորանց վե-րայ էլ որ քոյդ են։ կերակուր և շոր։ առող-ջութիւն և զօրութիւն տալով, և էլ էս ողոր-մութիւնները քեզ վերայ պահեց, հենց էն ժա-մանակն էլ որ դու մոռացար էն ձեռքն որ էդ ամէնը քեզ տուաւ։ Նա քեզ պահպանեց քո ամէն մեղաց մէջ՝ որ նորանցով դու նորան բաք-կացնումէիր։ և վերջումն քո աչքդ բաց արաւ որ քո կորուստը տեսնես՝ և քեզ զարթնացրուց որ նորանցից փախչես։ և հիմիկ էլ իրան մեծ շնորհքովն բարի յոյս տուաւ քեզ յաւիտենա-կան կեանքը ստանալոյ համար։ Ուրեմն էս-պէս կշռիր էն որ Աստուած արաւ՝ նրա հետ որ դու նորան արժան էլար, և սորանով խո-նարհութիւն սովորիր։ Թող քո աչքդ մտիկ տայ քո էն մնացած մեղաց վերայ էլ որ դեռ մնացել են քեզանում, և թող քո մեղանչական բարքդ՝ քո ունայն խորհուրդներդ, քո ծուլու-թիւնդ և էն ամեն պակասութիւններն որ քո պարտաւորութիւնները լցնելոյ կողմանէն երևումն՝ սովորցնեն քեզ խոնարհ լինել և վախե-նալ։ Այսպէս քեզանից վախենալով ինչպէս մին անօգնական երեխայ՝ վերև՛ նայիր դէպի ՀԾ որ միշտ անխափան զօրանաս՝ յոյս ունելով Յեսի Քրիստոսի

ձեռքին օգնութիւն ընդունել նեղութեան ժամանակում։

Իմ երկրորդ խրատն էս է։ Քո խղճմտանքդ ամէն անիրաւութենից ազատ պահիր։ Թէ որ մէնին զրկեցիր. մի ամաչէր խոստովան լինել էն (մեղքըն), և քո ամէն կարողութեան չափովն վճարիր էն զրկանքը, որ էն անիծված ապրանքն չըկպչի քեզ։ Արթուն կաց որ այ հոգին չիտրտմացնես անսուրբ վարքով. որ չըլինի թէ բարկացնես նորան որ քեզ երեսից քցէ. Այս պատճառիս համար նայիր արթնութենով քո սրտիդ վերայ և կտրիր նորա առաջին շարժվիլըն դէպի մեղքն, և բաց աչքով դէմ կաց էն փորձութիւնների առաջին որ դրսևանց են, և քո աչքըդ միշտ հաստատիր էն մեղաց վերայ որ նորանցով առաջ շուտով յաղթվեցար։ Եւ թէ որ մին ժամանակ մեղքն քեզ վերայ զօրանայ. մի թողուր որ քո միտքդ մոռանայ նորան, և մի թագցներ նորան քո ծոցումդ, բայց շուտով դէպի Աստուած փախիր, ամօթըն յանձդ առ, աւետարանի խոստմունքներըն առաջ բեր՝ որ դարձ եկած մեղաւորներին են խոստացված. նայիր ցի Քի վերայ ինչպէս քո ամենևին բաւական պատարագ և միջնորդ Հօր առաջին, և իսկի մին ժամանակ մի դադարիր աղօթքով Աստուծոյ երեսըն աղաչելուցն, մինչև որ մինէլ խաղաղութիւն շնորհէ քո տրտմած հոգւոյն, և էլ աւելի մեծ վախով լցնէ քո սիրտըդ որ չիտրտմայնես նորան։

Ինչպէս որ ես յոյս ունիմ՝ դու հիմիկ տընկ-
ված ես Աստուծոյ այգուն. ուրեմն պտուղ
բեր։ Քո սրտի մէջն դիր Աստուծոյ սէրն որ
դէպի մեղաւորներն է ցի Քի ձեռովն։ Մանա-
ւանդ միտքդ բեր՝ թէ Աստուած ի՞նչքան ողոր-
մութիւն արաւ քեզ՝ որ քեզ խաւարիցն դէպի
իրան զարմանալի լոյսն կանչեց։ Ցիշիր թէ ինչ-
պէս վերընկած էիր թմբրութեան քնի մէջն՝
մեղքով լցված և կորցնող ծուլութենումն. եր-
բոր Աստուած զարթնացրուց քեզ. որ քո կո-
րուստն տեսնես՝ և նորանից փախչիս։ Միտք
արա թէ քանի՞ ողորմելի պիտի լինէր քո վի-
ճակդ յաւիտեան՝ թէ որ Աստուած թողել էր
քեզ քո կամացդ հետևիլ։ Միտք արա թէ քա-
նի՞ մարդիք դեռ հիմիկ էլ էն կորցնող ճանա-
պարհովն են վազում որ նորանում դու էլ վազե-
ցիր։ Եւ թող զարթնացնէ քեզ Աստուծոյ
առանձին սիրոյ յայտնութիւնն որ քեզ վերայ է
որ նորա սիրոյ փոխն վճարես։ Սիրիր նորան,
ինչու որ առաջ նա սիրեց քեզ։ Եւ էն սէրն
որ դէպի քո երկնաւոր հայրն ունիս՝ թող մանէ
քո խորհուրդներիդ՝ խօսքերիդ և գործքերիդ
մէջն։ Միշտ և անդադար քաղցրութենով Աճա-
նից մտածիր։ Բարձրացրու քո սիրտդ դէպի
նա՝ որ ծածուկն տեսնումէ, և սիրտն և խոր-
հուրդները քննումէ։ Մին առանձին հաղոր-
դութիւն և միաւորութիւն խնդրիր ունել քո
հոգւոյ հօրն հետ, և սրա համար ջանք արա որ
խորհուրդներդդ յետ դարձնես աշխարհքի բա-

ներիցն, և քո միտքըդ բարձրացրու երկրից երկինքըն դէպի էն բաներն որ չեն տեսնըվում. բայց մէնակ հաւատքի աչքով։ Ապա էսպէս հաւատով վարիր քո կեանքըդ որ նորանով առաջնորդված լինիս ինչպէս հոգւոյ աչքով, և բարձրացած նորանով դէպի երկնային միտքն՝ սիրես Աստուծոյն՝ և երանելի լինիս նորանով։

Քո առաջին ոչինչ խօսակցութեան տեղակ՝ սրանից ետև թող քո լեզուն Աստուծոյ փառքին համար խօսի՝ նորա անունըն փառաւորելով՝ գոհանալով և շնորհակալ լինելով քո մարդասէր և բարերար Աճանիցն՝ ամէնին պատմելով էն՝ որ նա արաւ քո հոգւոյ համար. ցոյց տալով մեղաւորներին իրանց կորուստըն որ պիտի դայ, և սիրտ տալով նորանց՝ որ Աճանից վախումն. որ ժիր և կտրիճ լինեն նորա ծառայութեան մէջ։

Եւ կենցաղավարութիւնդ թող էնպէս լինի, ինչպէս որ աւետարանին վայելում։ Դու կանչվեցար որ հաւատքի բարի կռիւըն կռվիս. տես՝ չըլինի թէ թուլանաս կամ ձանձրանաս բարիք գործելուցն։ Ցոյց տուր թէ կենդանի էլար Աստուծոյ համար՝ քո անձըդ նորա ծառայութեանն ընծայելով՝ և նորանում ջերմեռանդութիւն յայտնելով։ Դու էլ մին բան արա նորա համար՝ որ էդքան բանըդ արել է քեզ համար։ Ամէն մարդկանց սիրիր, ինչուոր Աստու-

ծոյ ձեռաց ստեղծվածներն են. քարի արա ամէ-
նին քո կարողութեան չափովն։ Պատճառն որ՝
ժամանակն և կարողութիւնն և էլ ուրիշ շը-
նորհքներն նրահամար տրվվան քեզ՝ որ շատաց-
նես և լաւ շահես։ Գործածիր նորանց սիրոյ
և դթածութեան գործքերով։ Բանց արա ամէն
մարդոյ համար քո սիրտդ՝ և հենց քո թըշնա-
միների համար էլ. որ նորանց համար աղօթք
անես և թողութիւն տաս նորանց. և առ հա-
սարակ պատրաստ կաց որ բարիովն յաղթես
չարին։

Նմանապէս արթիւն կաց որ Աստուածպաշ-
տութեան ղօրութիւնը նորանով էլ ցոյց տաս՝
որ սրտի ջերմեռանդութենով քո պարտաւորու-
թիւնը որ քո ընտանիներին պարտական ես՝
կատարես։ Քաղցր և անուշ և բարեսիրտ էլիր
ամէնին հետ որ քո շորս կողմովդ են։ Քո ան-
ձըդ ցածութեան, սիրոյ և համբերութեան
օրինակ դիր քո ընտանիների առաջին։ Ցոյց
տուր խնամքըդ որ ունիս նորանց հոգիների և
մարմինների համար՝ ջերմեռանդութենով միշտ
տան միջի աղօթքըն կատարելով՝ և Աստուծոյ
բանը նորանց հետ կարդալով։ Ցոյց տուր քո
ընտանիներին և քո ճանաչներին՝ թէ նոր սիրտ
ունիս՝ նոր կեանք վարելով, և ջանք արա որ
ամէնևին Աստուծոյ կամքին և խօսքին միաբան
լինիս։ Արթիւն և աչքաբաց էլիր քո ամէն
գործերումդ։ Վարիր ամէնին իրանց պարտքըն՝
որին որ հարկը (խրճը) հարկըն՝ որին որ մաքսը

(Գէ-Տրու-Հը) մոքսըն, և էսպէս էլ քո ամէն օրինաւոր պարտքըն, և իսկի մեր մի ղրկեր, ոչ թագաւորըն և ոչ քո հետ հարկ քաշողն, նորանց էլ որ ղրկումեն իսկի մի յօժարայներ և սիրտ մի տար որ էն անեն։

Եւ էլ մանաւորաբար սէր ցոյց տուր Քսի համար քո հաւատքի ընտանիներին. այսինքն ճշմարիտ հաւատացեալներին։ Պատճառն որ՝ ամէն մարդիք Աստուծոյ պատկերին պէս ստեղծվեցան առաջուց, և էս պատկերս մասնաւորապէս դորանցումն է մինչև նորոգված, և նրա համար մին առանձին կերպով՝ Քսի ժողովուրդ են։

Ինչու որ Քսի արիւնովն լուացվեցան իրանց մեղքիցն, և նորա հոգւովն սրբվեցան։ Եւ որ աւելի ժիր և ջերմեռանդ լինիս էս գործումս, և սիրոց համար ջանք անելումն, նայիր շատ անգամ հաւատքի աչքովն դէպի փառաւոր վարձքն որ քո առաջիդ կայ՝ դէպի յաւիտենական փառքի մեծութիւնն որ պիտի տըվվի էն օրումն երբոր Քս հատուցումն կըտայ ողորմութեան և սիրոց գործքերին որ նորա անունին համար արած են՝ էնպէս, ինչպէս թէ հենց յատուկ իրան համար էին արած։

Ուրեմն էս խորհրդով մխիթարված՝ և էս յուսով ժրացած, ջանք արա որ աճիս գիտութենով և սրբութենով, հաւատքով և սիրով, Աստուծոյ վախով և ցածութեամբ, և ամէն

քրիստոնէական շնորհքներով։ Զանք արա որ յառաջացնես Աստուծոյ վառքն, մարդկանց երանութիւնն, և էլ քո անձնումդ էնալիսի միտքն և կամքն որ նորանցով ընդունելի լինիս հանիլ սրբոց բաժնին լուսի միջումն։ Եւ էս սրբութեան գործս քեզանում յառաջացնելոց համար՝ յոյս ունեցիր Աստուծոյ շնորհացն՝ սրտի մտօք գործածելով էն ամէնն որ նորանցով կարելի է շնորհք ստանալ, ինչպէս որ է աղօթք անելն, եկեղեցումն և տանումն Աստուծոյ բանն լսելն և կարդալն, և նորա ամէն պատուիրանքներն բոլոր սրտով կատարելն։ Եթէ էսպէս վարես կեանքդ, ապա և Քրիստոսումն հաստատ անկված՝ և ամէն հոգևոր երանութենով լցված մարդ կըլինիս։

Ուշք։ Տէր՝ շնորհակալ եմ քեզանից. ինչուոր տեսնումեմ թէ էն գործն որ իմ առաջիս է՝ շատ մեծ է. բայց յոյս ունիմ որ Աստուծոյ օգնականութենովն մինչև իսպառ համբերեմ։

Քահ։ Պէտք է որ դու շատ նեղութիւնների և շատ հակառակութիւնների համար պատրաստ լինիս. պատճառն որ արքայութեան ճանապարհն խաչի ճանապարհ է, և շատ նեղութիւնների միջով պիտի անցկենայ։ Աշխարհքն և մարմինն և սատանայն զօրեղ թշնամիներ են, և խիստ սաստիկ միաբանված են իրար հետ։ Քո բընութեան տկարութիւնն միշտ փորձանքների մէջ կընկնի՝ կըթուլանայ և կախորժէ յետ քաշվիլ.

նրա համար որ հենց քո սիրտդ իրան մեղաւոր ցանկութիւններովն քեզ միշտ կըչարչարէ և կը-նեղացնէ, և մարդիք էլ՝ երբոր կըտեսնեն թէ էն լայն Ճանապարհիցն հեռանումես որ ամէնին դէպի կորուստն է տանում՝ ամէնքն էլ քեզ վե-րայ վերկըկենան, և չէ թէ մէնակ անհոգներն և ամբարիշտներն քեզ ծաղր կանեն կամ նա-խատինք կըտան, բայց էն քրիստոնեայքն էլ՝ որ դրսևանց բարի են երևում՝ քեզ հակառակ կը-լինին։ Ինչուոր շուտով կասեն իրանց սրտերու-մըն էն որ հին փարիսեցիքն ասումէին՝ թէ դու մեր հասարակ Ճանապարհըն թողլ անելով՝ մեզ ամէնիս դատապարտումես։ Վերջն՝ սատանայն զարմանալի խորամանկութենով՝ մարմինըն և աշ-խարհքըն իրան կամքին պէս շարժումէ և կամ հակառակութենով և կամ կեղծաւոր քաղցրու-թենով ջանք է անում որ Ճշմարիտ հաւատաց-եալներըն կորցնէ, և շատ ժամանակ ինքն էլ-չար խորհուրդներ է ցանում սրտերի մէջ՝ որ հա-ւատքի զօրութիւնըն քանդէ, և մեղաց իշխա-նութիւնըն մինէլ հաստատէ։ Բայց դու մի վա-խենար՝ ինչուոր Աստուած ամէնիցն բարձր է։ Քրիստոս միշտ կենդանի է՝ բարեխօս լինիլ մեզ համար, և ամէն դժուարութեանց մէջ փրկել նորանց՝ որ նորանով Աստուծոյ մօտն են գալիս։ սուրբ հրեշտակներն պահապանի պէս կըպահեն քեզ։ և ամէն Ճշմարիտ Աճապաշտներն կըլինին քեզ սիրելի եղբարներ և պատրաստական բարե-կամներ։ Ուրեմն նորանք որ քեզ հետ են՝ շատ են քան նորանք որ քեզ հակառակ են։

Դու ինքն մի լինիր քո անձին թշնամի և ասա խելի մին բան կարող չէ փնաս տալ քեզ։ Բայց մի լինիր ամբարտաւան մտքով՝ բայց վախի. ինչու որ. Իրաւունքի է էն մարդն որ վախնում միշտ։ (Աստուծ. Էջ. 14)։

Ազգ. Հանրային գրադարան
Гос. Публ. Библиотека
ՀՍԽՀ-ՍՍՀ
Ակ. А. Мясникян
Ս. ՍՈՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ